

ԲԱՆԱՐԱԿԱՆ

«ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԳԻՐՋԸ 1801—1850 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ»

th

ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐԱՅԱՅ ԳՐՔԵՐ

Վերջին տարիների ընթացքում, Երևանում լրաց են տեսել, հայտպատճիր գրքի վերաբերեալ մի քանի ցուցակ-ուսումնակութիւններ, որոնք իրենց տեսակի մէջ, այլ կարդի մինչ այժմ եղած հրատարակութիւններից աւելի լրիւ ու ամբողջական են են մեծ կարեւորութիւն են ներկայացնում:

Նման ցուցակների կամ աշխատութիւնների կաղմանքինը, կապուած է մեծ դժուարութիւնների հետ եւ պահանջում է երկար ժամանակ, անսպաս եռանին եւ խոր ուշանորութիւն:

Վերսիչեալ ցուցակ-գրքերից առաջնորդ «Հայ Հնատիպ Գրքի Մատենագիտական թանգարան է, որ պարունակում է 1512-1800 թուականներին հրատարակուած գիրքերի նկարագրութիւնը, և որ կազմուել ու խմբագրուել է Ալ. Միասնիկեանի անուան Հանրապետական գրադարանի ժամանագիտական բաժնի Զանքերություն 1963 թուին:

Երկրորդը՝ Քնարիկ Կորկեստանին «Հայ Տպագիր Գիրքը Կոստանինու-
պալսում» աշխատութիւնն է, որի սկզբում ամփոփ ձեւով արտելի է Պղծում
1567 թուից մինչև 1850 թուականը տպագրուած գրքերի պատճութիւնը եւ
գարգացման յաջորդական հանգամանքները, իսկ վերջում տպագրուած գր-
քերի ցանկը:

Երրորդ եւ չորրորդ գրքերը պատկանում են Հայկ Դաւթեանի ձեռքին:

Սրանցից առաջինը կրում է «Աշխարհաբար զիրքը Հայ տպագրութեան սկզբից մինչեւ 1850 թուականը», որ միւսի նման, «Ազգում ամփոփ ձեւով նկարագրում է աշխարհաբար գրքի տպագրութեան գարգաղումը և առաջին աշխարհիկ լիդումը լույս տեսած կամ աշխարհաբար խօսքերու ու երգերու նեցոց գրքերից ցանկը, համառու նորոյներով, սկսեալ 16-րդ դարից (1513 թուից) մինչեւ 1850 թուականը»:

Զորբորդէ, որ Հանդիսանում է առաջին՝ «Հնատիփ Գրքի...» շարունակութիւնը եւ նրա նման ներկայացնում է մեծ կարեւորութիւն, կրկին կազմուել է Հայկ Դաւթեանի կողմից եւ կրում է «Հայ Գրքը 1801-1850 թվականներին» անումն եւ տպագրուել է 1967 թուականին:

Ներկայիս մեր խոսքը վերաբերում է միայն վերջինիս, որը մեզ սիրով ուղարկել է գրքի յարգելի կազմողը: Աշխատութիւնն ունի 538 էջ, «Կրոսմ յաւելիա» 88 էջով: Պարունակում է 1732 (1724+8) գրքի նկարագրութիւն:

Գրքի սկզբում 74 էջ նախաբանով, գեղեցիկ եւ սպառիչ ձեւով նկարագրուած են գրքերի տպադրական ճիշերի ու կաղմուած մատենապիտական ցուցակների յաջորդական փուլերը, ապա տրուած են գրքերի անուանաթերթերի գրուածներն ու համառօտ նկարագրութիւնները՝ էջ, ծաւալ եւ այլն: Խոկ վերջում մի քանի ցանկեր, ինչպէս «Վերնագրերի այլրենական ցանկ», «Յանկ Հայերէն եւ եւրոպական լեզուներով զուգահետ բնագրեր կամ տիտղոսաթերթեր ունեցող գրքերի» (նոյնը ուսաներէնով), «Անձնանուանների ցանկ», եւ «Յուցակ տպագրութեան վայրերի եւ տպարանների», որոնք բաւական դիւրացնում են փնտուած գրքերը աւելի շուրջ գտնելու աշխատանքը:

Գրքում կան մի քանի տիտղոսաթերթերի եւ այլ լուսանկարների նրանահանութեան պատկերներ:

Ներկայացուած 1732 անուն գիրքը բաժանուած է երկու մասի, գրադարաններում գտնուող կամ կազմողի ձեռքի տակ եղած գրքեր եւ շտեսած, այլ միայն մատենագիտական աղբիւրներից անուանները ձեռք բերած գրքեր: Առաջինների վրայ որեւէ նշան դրուած չէ: Խոկ վերջինները նշուած են աստղանառով:

Վերոյիշեալ աշխատութիւնը ձեռքի տակ ունենալուց յետոյ, երկարժամանակ, յատկապէս Հնդկահայ հրատարակութիւնների հետ համեմատելով ու ուսումնասիրելով, յաջորդեցինք նոր-Ձուղայի Ս. Ամենագրիկչեան Վանքի գրադարանից եւ այլ անձնական գրադարաններից ձեռք բերել 50 գիրք, որոնցից 26-ի անունը նշուած է, բայց կազմովը չի ունեցել ձեռքի տակ, իսկ 24 գրքի անունը երբէք յիշուած չէ ցուցակում(1):

Վերոյիշեալ 50 գրքից բացի, մեզ յաջողուեց անձնական մի գրադարանի գրքերի ցուցակի վրայից ձեռք բերել նաեւ 5 հատ չշտանուած եւ 5 հատ չյիշուած նոր գրքերի անուաններ, բայց քանի որ մեզ չյաջողուեց գրքերը տեսանել եւ ասուզումներ կատարելու ուստի ներկայիս նշում ենք միայն նրանց անուանները:

Ստորեւ յաջորդաբար ներկայացնում ենք՝ 1.- Գիրքը կազմողի ըլտեսած, 2.- Գրքում չյիշուած, 3.- Կալկաթայում «Մկրտող Միսիոնարաց» տպարանից լոյս տեսած, 4.- Միայն անուանները ձեռք բերած գրքերի ցանկը:

Սոյն ցանկերի մէջ, Հնդկաստանում տպագրուած գրքերից բացի, յիշուած են նաեւ մի քանի այլ վայրերի տպագրութիւններ:

(1) Աշխատութեան մէջ յիշաւած Հնդկահայ տպագրութիւնից դեռևս գտնուած չեն 28 անուն գիրք, իսկ թէ դեռ բանի՞ոք կամ որ յիշուած ու գտնուած չեն! մնաւէ է անօրոշ:

Ա

ՑԱՆԿ ԶՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻ

1809

1. «Խորերդատևոք սրբյ պատարագին ըստ արարութեան Հայաս-
տամեայս Եկեղեցւոյ: Յամի Տեառն 1809, ի Վէնէտիկ: Ի Վանս սրբոյն Ղա-
զարու»:

Էջ 29, չարուածք՝ $21 \cdot 6 \times 15 \cdot 9$ սմ.: Վերջում՝ էջ 27-29, ունի
«Ալլէլուիայ»:

(«Յուցակ»ի Համար 120, լ. Գ. Մ.-ի անձնական գրադարան):

2. «Թանգարան բարեզարդ կամ հաւաքումն զրաբնալի եւ հաղցրա-
լուր բարոյական պատութեանց, քարգմաննալ յիտալական լեզաւէ ի հայ-
կական բարբառ. աշխատասիրութեամբ Պետրոս վարդապետի Պաւլագեան
կարմեցւոյ աշակերտին բրօքականին, ի գրուան եւ ի յօգուտ ուխտի ման-
կացնց Եկեղեցւոյ: Հատոր Ա:

Յամի Տեառն 1809 եւ ի թուին հայոց 1258: Արդեամբք եւ ծայսլուք
պարուն Սարգիս Նատալը Ազագվալեանց կոչեցելոյ, և ի նորին նորակերտ տը-
պարանի որ ի Մադրաս:

Էջ՝ 174, չհաշուած + 10: Շարուածք՝ $11 \cdot 2 \times 7 \cdot 2$ սմ.:

(«Յուցակ»ի Համար 129, Ամենափրկիչ Վանքի գրադարան՝ Համար
3359):

1810

3. «Ոզք Եղեսիայ Տարաքի: Վայելչահիւս չափարամութեամբ՝ սըր-
բյն Ներսէսի Շնորհաւոյ Հայոց կաթողիկոսի Կոյայեցւոյ: Վիպասանութիւն
Հայոց չափան ոսիւէ տեառն Վահրամայ մեծի վարդապետի: Ներբողեան առ-
սուրբն Ներսէս Շնորհալին, տացեալ տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ, ուռ-
նաւոր հեգմանը յանձնաւ: Զգուշանք Տնմութեամբ ուղղագրեան՝ բաղդա-
տութեամբ ձեռազիր օրինակաց: Յթնորութեան ի հայրապետութիւն ամե-
նայն հայոց՝ տեառն Եփրեմի արքեպիսկոպոսի, տառաջնորդին հայոց Բու-
տաստանու: Յամի Տեառն 1810, եւ ի թուին Հայոց 1259, ի մայիսի 20: Արդ-
եամբք եւ ծայրիւէ պարուն Սարգիս Նատալը Ազագվալեանց կոչեցելոյն, եւ ի
նորին տպարանի որ ի Մադրաս:

Էջ 216, «Կդրում չհաշուած 6 էջ, չարուածք՝ $11 \cdot 1 \times 6$ սմ.՝

(«Յուցակ»ի Համար 154, լ. Վ. Գ., Համար 2095):

1812⁽²⁾

4. «Ոզքերգութիւն ի Վերայ մահուան Յուլիոս Կեսարոսի: Արարեալ
ի ներկում Վոյտերոյ Գապղիացւոյ, ի մերս վերածեալ հայկական բարբառ, ի
պարան Յակոբայ Նազար Շամբեան, յԱնգըլիական բնագրէ, ի գրուան ըն-
թերցասէր պատամեկացն մերազնէից:

(2) Յուցակը գրուած է 1818 թուին:

Մադրաս, ի տպարանի երկոցունց հարազատացն պարունաց Յակոբյան եւ Յովսենիայ նագար Շամիրենանց: 1812:»

Էջ' 99, «Կղզում չհաշուած 18 էջ, շարուածք՝ $11 \times 7 \cdot 1$ սմ.:

Սկզբում 14 էջով ունի «Թուլքը պարոն Ալգարատսեայ առ Ամիրայ Ֆրանժինի դեսպանն որ ի Ֆլորենտինայ: Ի վերայ ոգրերգութեանն Յուլիանի Կեսարով, ի պարոն Վալտերայ յօրինեալ»:

(«Յուցակ»ի Համար 336, Ա. Վ. Գ., Համար 2831):

1819

5. «Օրացոյց: Յորաւմ պարագրին ամիսք Հռոմայեցոց Ազարիայի եւ Բանկալցոց աւորք լրանի եւ...»

Հաւաքեալ եւ յօրինեալ երկասիրութեամբն Զըմբլաւմ Աւետեամին: Տպագրեալ արդեամբ եւ ծախիւմ օժանդակ լինողաց տպարանին:

Ի սկիզբն Յունվարի 1819: ի Կալկարա: ի տպարանի Աւետ Զըմբլաւմ Աւետեամին»:

Էջ' 12+56=68, շարուածք՝ $17 \cdot 7 \times 10 \cdot 3$ սմ.:

(Թերթերը մէծ ու փոքր ունեն: «Յուցակ»ի Համար 360, Ա. Վ. Գ., Համար 623):

1820

6. «Օրացոյց: Յորաւմ պարագրին ամիսք Հռոմէացոց Ազարիայի եւ Բանկալցոց...»

Հաւաքեալ եւ յօրինեալ երկասիրութեամբն Զըմբլաւմ Աւետեամին: Ի սկիզբն Յունվարի: 1820: ի Կալկարա: Ի տպարանի երկոցունց եղբարց հարազատաց Աւետի եւ Յովհաննիսի Զըմբլաւմ Աւետեամին:

Էջ' 16+20=36, ժաւալ շարուածք՝ $17 \cdot 7 \times 10 \cdot 3$ սմ.:

(«Յուցակ»ի Համար 376, Ա. Վ. Գ., Համար 624):

1821⁽³⁾

1823

7. «Քերականութիւն Հայկագեան Լեզուի: Յօրինեալ ըստ նախնի ուղղախոսութեան ի հայր Միհեայլ Վարդապետէ Զամշեանց, ի տպագրեալ ի Վէնէտիկ: Որոյ առաջին մասն վերսուին տպագրեցաւ ի Հայրապետութեան տեառն ենառն Եփրեմայ ամենայն հայոց կարողիկոսի, ի պէտս Մարգարիական Ճեմարանին որ ի Կալկարա: ԱՊԻԳ (1823) տպագրեալ ի Մարգարիական մամլոց»:

Էջ' 164, չհաշուած 8 եւ 29 (=201), շարուածք՝ $15 \cdot 8 \times 9 \cdot 8$ սմ.:

(«Յուցակ»ի Համար 440, Ա. Վ. Գ., Համար 3020):

(3) «Խորագիւմա Դէրոզութեան» գիրքը («Յուցակ»ի համար 391 եւ Ա. Վ. Գ. համար 3419) չնեմ նկարագրում, որպիսեւն ըստ կազմողից ստոցած մի գրութեամ, արդէն ունեն ձեռքի տակ:

8. «Օրացոյց ամի՞ տեսան 1823, Հայոց քուականիս 1272 եւ փոքր բույս 208: Յարում պարունակիմ հարկաւոր տարրական գիտելիք, ամիսի Ազարիայի, Հռովմայիցւոց, Բանիակցւոց եւ տանկաց...

Աշխատասիրեալ պարոն Մարտիրաս Մկրտչեան անդամակցի Օճա-նափիու ժողովոյն, որ ի թումբայի եւ յարգիի իբր աւագ սորևառագին Հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ:

Ի Կալկարտ, ի 1 Յունիսի, յամի տեսան: 1823. Տպագրեալ յօթա-նասիւ տանը տպարամի:

$\frac{1}{2} \cdot 14+12+16+5+56=103$, շարուածք՝ $14 \cdot 2 \times 9 \cdot 5$ սմ.:

Երրորդ էջակալուած մասն սկսւում է անգլերէնից օրինակուած եւ տողի երէնով Գորգին իսանի սպանման եւ անզլիացւոց Ղասմայիխան նարարի 1763 Բուհն տեղի ունեցած պատերազմի պատմութիւնով:

(«Յուցակ»ի Համար 441, Ա. Վ. Գ., Համար 577):

1 8 2 6

9. «Յօւցակ (Օրացոյց) վասն ամի՞ տեսան 1826. բաժանեալ երկու մասուն: Տպագրեալ ի Մարդասիրական տպարանի ի Կալկարտ:

$\frac{1}{2} \cdot 124$, շարուածք՝ $16 \cdot 2 \times 9 \cdot 2$ սմ.:

Էջ 39-ից յետոյ սկսւում է երկրորդ մասը հետեւեալ վերնակրով.

«Մասն Երկրորդ: Յարում պարունակիմ քանասիրական նառի, Արտա-վկայք եւ զանազան հարկաւոր գիտելիք եւ այլն եւ այլն:

(«Յուցակ»ի Համար 543, Ա. Վ. Գ., Համար 1585, Խոյզանի Արով-եան Գրադարան, Համար 222):

1 8 2 8

10. «Ճառ ի վերայ Յարուածեան Փրկչին մերոյ Թիսուսի Քրիստոսի կամ վասն տօնի Զատոկին»:

$\frac{1}{2} \cdot 15$, շարուածք՝ $17 \cdot 5 \times 8 \cdot 5$ սմ.:

Տիսղոսաթերթ չունի, վերի լուսանցքում ձեռքով զրուած է. «1828 Կալկարտ տպարան Մարդասիրական ձեմարտին»:

Մի այլ գրացուցակում, տպագրութեան Բուականը նշուած է 1830. Կարսիառարար Հարողոցացնք տեսնել:

(«Յուցակ»ի Համար 1715, Ա. Վ. Գ., Համար 2844 եւ 2964):

1 8 2 9

11. «Ճառ ի վերայ ապաշխառութեան եւ նշմարիտ հաշտութեան ընդ Ասուուծոյ:

Ի Կալկարտ տպագրեալ ի գործառան Մարդասիրական ձեմարանի ի Ցուլիսի 1829: 2000 օրինակէ»:

Ներքեւում ունի նոյնը անգլերէնով:

$\frac{1}{2} \cdot 31$, շարուածք՝ $17 \cdot 5 \times 8 \cdot 5$ սմ.:

(«Յուցակ»ի Համար 1713, Ա. Վ. Գ., Համար 1162):

1 8 3 0

12. «Վերջին առարք: Բարեյիշառակ Տիկին Մէրջանին Սսեփանոս-իան, բառութերագրեալ ի Յարում մտերիմ բարեկամէ ի Յովիաննիս Ավդալեանց.

Ի Կալկար-ա Յաւսեանն Հոկտեմբերի 1830 ի տպարամի Մարդասի-
րական ձեմարամի» :

Էջ՝ 8, շարուածք՝ $16 \cdot 5 \times 9 \cdot 5$ սմ. :

Վերջում ունի երեք առւն (8-ական տողերով) մի ուստանաւոր, գըր-
ուած Յովհաննէս Ավդալեանի կողմից՝ «Առ քարեյիշատակ Տիկին Մէրջան
Ստեփանոսեան» :

(«Ցուցակ»ի Համար 676, Ա. Վ. Գ., Համար 590):

13. «Ճառ ի վերայ ծննդեան եւ յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի : Ի Կալկար-ա : Տպագրեալ ի գործատան Մարդասիրական ձեմա-
րամին : 2000 օրինակի : Ի Յունիսի 1830» :

Ներքեւում նոյն ունի անդէրէնով :

Էջ՝ 16, շարուածք՝ $16 \cdot 8 \times 8$ սմ. :

(«Ցուցակ»ի Համար 1714, Ա. Վ. Գ., Համար 2955, Խ. Ա. Գ., Հա-
մար 196) :

1831

14. «Ճառ ի վերայ ամերկիւկութեան մահու, ի Կալկար-ա, Տպագրեալ
ի գործատան Մարդասիրական ձեմարամին : Ի Սեպտեմբերի 1831: 2000 օրի-
նակի» :

Նոյն ունի անդէրէնով :

Էջ՝ 20, շարուածք առանց լուսանցքների Համարների՝ $16 \cdot 5 \times 8 \cdot 5$ սմ. :

Առաջին էջի գերնապիրը դրուած է. «Բան յորդորական ի վերայ ա-
ներկիւդութեան մահու» :

Էջ 20-ի վերջում փակազծերի մէջ դրուած է. «Այս ճառ քարգմա-
նեցաւ ի կոստանդնուպոլիսիս :

(«Ցուցակ»ի Համար 1699, Ա. Վ. Գ., Համար 1161) :

1841

15. «Վիկտորիայ Այրենարան : Յօրինեաց գիտնական տիրացու համ-
գուցեալ Մարտիրոս Մկրտչեան Դաւթեանց : Ի հայրապետութեան տեսան
տեսան Յովհաննէու կաքողիկոսին Ամենայն Հայոց : Եւ Յառաջնորդութեան
Խաչատրոյ առաջնորդին սրբայ Ամենափրկչի վանացն Զուգայու : Ի տպարամի
Նպիսկոպոսական ձեմարամին : Ի Կալկար-ա 1841 թ. 7» :

Էջ՝ 108, չաշուած 4, շարուածք՝ $14 \cdot 5 \times 8 \cdot 8$ սմ. :

(«Ցուցակ»ի Համար 1118, Ա. Վ. Գ., Համար 3064) :

16. «Առաջին Քրիստոնէական վարդապետութիւն ի պէտո դպրոցաց
եւ գերդատամաց ի յարգոյ Յ. Գ. Պատովէն. քարգմանութիւն վասն Ամերի-
կու հաւատոյ տեսրակների ժաղովէին. տպագրեալ ի գործատան Մկրտող
Միսիոնարաց ի Կալկար-այ 1841» (թիւ 14) :

Էջ՝ 36, շարուածք՝ $14 \cdot 2 \times 8 \cdot 2$ սմ. :

(«Ցուցակ»ի Համար 1113, Ա. Վ. Մ. անձն. դրագարան) :

1843

17. «Նոր կարգի եւ կանոնի Հայկեան Մարդասիրական ձեմարամին :
Յառաջնորդութեան տեսան Յովհաննէու Սուրենիսան արժամբանիլ հայրենա-

սէր առաջմորդին վաճաց սրբոց Ամենափրկչեան որ ի Զուղայ: Ի Կալկաթա-
1843 ի տպարամի Մարդասիրական ձեմարամին:

Էջ՝ 85, ծաւալ շարուածք՝ $15 \cdot 5 \times 10$ սմ.:

Ունի անուանաթիրթի անգլերէնը առանձին էջում:

(«Յուցակ»ի համար 1245, Ա. Վ. Գ., Համար 1573):

1845

18. «Այբբենարան: Յօրինեաց զիտական տիրացու Մարտիրոս Մ-
Դաւթեանց Երկրորդ տիպ ի տպարամի Արարատնան Ընկերութեան Կալկա-
թա 1845»:

Էջ՝ 120, չհաշուած 4, շարուածք՝ $13 \cdot 5 \times 8 \cdot 4$ սմ.:

(«Յուցակ»ի համար 1367, Ա. Վ. Գ., Համար 1817):

1846

19. «Յովիաննաւ վարդապետի Երգմիացւոյ Զարդի Երկնից առ Ապլոց
իշխան: Ի Կալկաթա ի տպարամի Արարատնան Ընկերութեան 1846»:

Էջ՝ 102, չհաշուած 8, շարուածք՝ 7×4 սմ.:

(«Յուցակ»ի համար 1428, Ա. Վ. Գ., Համար 2502):

20. «Ազօքամատոյց ի պէտս առտենին պաշտաման հաւաքածոյ յերիւր-
մամիր եւ յօրինմամիր ի լոյս ընծայեալ յօգուտ եւ ի պէտս հայկապանց ար-
դամիրք եւ ծախիւք Մամուկի Զօրաբեան: Ցամի Տեառն 1846: Ի Տպարամի Ա-
րարատնան Ընկերութեան ի Կալկաթա»:

Էջ՝ 173, չհաշուած 14, շարուածք՝ $12 \cdot 5 \times 7 \cdot 6$ սմ.:

(«Յուցակ»ի համար 1423, Ա. Վ. Մ. անձ. գրադարան):

21. «Բուրվառ ազօքից: Հաւաքեալ ի Խոգիւր մատենից ի պէտս ջեր-
մեռամնին ազօքիւրաց: Աշխատափրութեամբ Պօղոսի Վիշենեան Կաստոմե-
թուպօլսեցւոյ: Երկրորդ տիպ ի Կալկաթա ՅԱրծիւ տպարամի Պօղոսի Վիշեն-
եան: 1846»:

Էջ՝ 104, չհաշուած 12, շարուածք՝ 7×4 սմ.:

(«Յուցակ»ի համար 1419, Ա. Վ. Մ. անձ. գրադարան):

22. «Օրացոյց վասն ամի տեառն 1846: Ի Կալկաթա ի տպարամի
Մարդասիրական ձեմարանի»:

Տիտղոսափրութի մէջին մասում կլոր շըջապէի մէջ նկարուած են եր-
կու գլուխ, իսկ չուրջը գրուած. «Վիկտորիա դշնոյ Բյուստանիոյ եւ այր նորա
Ալպերտ պատկեալ ի 10 Փետրուարի 1840»:

Գրքի վերջում, մէկ էջով, ունի Ճեմարանի 1845 թուի ելեւտից
հաշուետախոտակը:

Էջ՝ 55, շարուածք՝ $16 \cdot 2 \times 10$ սմ.:

(«Յուցակ»ի համար 1431, Ա. Վ. Գ., Համար 580):

1847

23. «Աւետարան Խւզաբերից ի պէտս եւ ի զարդ Հայաստանեայց սուրբ Եկեղեցեացն Հայոց. ի հայրապետութեան տեառն Երրորդ Ներսիսի առաքելաշաւիդ նարապսակ կաթուղիկոսի տմենայն Հայոց: ի Կալկաթա 8Արծիւ ծիր տպարամի Պօղոսի Վիշէնան Կոստանդնուպօլիսցւոյ 1847»:

Էջ՝ 16 (Համարակալուած չէ), շարուածք շրջազարդո՞յ՝ $32 \times 17 \cdot 7$ սմ.։
(**«Ցուցակ»ի Համար 1471, Ա. Վ. Գ., Համար 4 եւ 5):**

1848

24. «Օրացոյց վասն ամի տեառն 1848: ի Կալկաթա ի տուպարանի Մարդասիրական Ճեմարանին»:

Վերջում մէկ թէրթիկով կցուած է 1847 թուի Մարդասիրական Ճեմարանի ելեւմտից հաշուեցոյցը:

Էջ՝ 48, շարուածք՝ $16 \cdot 8 \times 9 \cdot 5$ սմ.։
(**«Ցուցակ»ի Համար 1543, Ա. Վ. Գ., Համար 1023):**

25. «Համառու Ֆերականութիւն Հայկագիտան լեզուի»:

Անաւարտ տպագրութիւն է, տպուած 1848 թուին Կալկաթայի Արտադրատեան Ընկերութեան տպարանում, Հեղինակ՝ Մեսրոպ Թաղիսադեան:

Էջ՝ 48 (թէրթի), շարուածք՝ $12 \cdot 8 \times 7 \cdot 5$ սմ.։
(**«Ցուցակ»ի Համար 1540, Ա. Վ. Գ., 3162, Լ. Գ. Մ. անձն. զրդ.):**

26. «Ժամագիրք. արարեալ սուրբ եւ աստուածաշնորհ քարգման-չացն մերաց Սահակայ եւ Մերսովայ եւ երանելի հայրապետացն Գիւտոյ եւ Յովհաննու Մանդակաւեայ, եւ սրբոյն Ներսիսի Շնօքակալոյն: ի Հայրապետութեան տեառն Ներսիսի հիմներորդի՝ հարիւր երեսնեւկնեներորդի կարուդիկոսի տմենայն հայոց: Կալկաթայի յԱրծիւ տպարանի Պօղոսի Վիշէնան Կոստանդնուպօլիսցւոյ, յերկրորդում ամի տպարանին»:

Էջ՝ $607 + 5 + 9 + 19 = 640$, շարուածք՝ $13 \times 7 \cdot 5$ սմ.։

Վերջում առանձին էջակալութեամբ ունի հետեւեալ մասերը.

«Երատ տօմարական եւ մշտնենաւոր աղխասակաց» (Էջ 1-9), «Կարգ յաջորդութեան առաքելոցն Թաղիկոսի եւ Բարբագիմեոսի, ոք եղեն հավիւժ սուրբ եկեղեցւոյ մերայ մինչեւ ցաւըրք Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց աշխարհի»: եւ «Դասակարգութիւնք եւ անցք ժամանակազրութեան կարուդիկոսացն Հայոց» (Էջ 3-19):

Մանօք. «Ցուցակ»ում կայ այս գիրքը, այնուղ պակասում են միայն վերջին առանձին էջակալուած մասերը, որի համար եւ լրիւ նկարագրութիւնը բնիթեք այսուել. Ղուզիւնի միշած մասերից երկուուր պակասում են այսաւզ, իսկ միշաները կան մի այլ ժամագիրք Աստենի-ի մէջ, որ նկարագրուել է չշիշուած դրգերի Համար 23-ի տակ:

(**«Ցուցակ»ի Համար 1541, Ա. Վ. Գ., Համար 950):**

Բ

ՑԱՆԿ 23ԻՇՈՒԱՆ ԳՐՔԵՐԻ

1804

1. «Տերակ որ կոչի պատճառ։ Թարգմանեալ ի գանազան մասենից Պարսիացուց յումիմնէ բանասիրէ առ ի յօգաւու նորավարժից մանկանց հայց։ Վերսալն սրբազնեալ աշխատաւութեամբ Մարիամ Բակոր, Ռիաննէն Տէր Ցակորեանց կոչեցելոյ։»

Ցամի տեսան 1804 նոյեմբերի 1. ի Հնդիկս ի մայրաքաղաքն Մադրաս ի տպարանի Տէր Ցարութիւն Շմալունեան Շիրազեցւոյ։

Էջ՝ 138, չհաշուած 2, շարուածք՝ $12 \cdot 2 \times 8 \cdot 6$ սմ.։
(Ա. Վ. Գ., Համար 3375)։

1812

2. «Պատմութիւն Վարուց. Ախանչելեաց եւ դիպուածոց սրբոյն Յօհաննու Ռոկիերան հայրապետին Կոստոնթինուալուսոյ։

Թարգմանենալ ի Յունականէ ի հայու Գրիգորէ Կաքուղիկոսէ Վըկայասէր կոչեցելոյ։ շուրջ զբուականութեամբն Հայոց. 500։

Տպագրեցնալ էր աշխատասիրութեամբ Սարգսի Արքեպիսկոպոսի Կոստոնթինուալուսոց յամի տեսան 1752. ի Վէճէտիկ։

Վերստին տպագրեալ եղեւ արդեամբ եւ ծախիւք յասուկ օգնական լինողաց մերազնէից։ Հարիսր երեսուն եւ երես երրորդի Հայրապետութեան տեսան Եփրեմի ամենայն Հայոց կաքուղիկոսի։ Աշխատասիրութեամբն Զըմբր-լում Աւետ Խօշիքաննան կոչեցելոյ։ Ի տպարանի Աւետ Զըմբրլումինան։ Ցամի տեսան 1812. ի Կաղկարայ։»

Էջ՝ 283, չհաշուած 10, շարուածք՝ $13 \cdot 2 \times 9 \cdot 7$ սմ.։
(Ա. Վ. Գ., Համար 3111)։

1813

3. «Մեկնութիւն Երգոց Երգոյն Սառումնի, Արարեալ ի սրբոյն Գըրիգորի Նարեկացւոյ, առաջին տպագրումն զրյաց եղեալ է ի Վէճէտիկ յամի տեսան 1789. Խսկ այժմ վերստին տպագրեցաւ արդեամբ եւ ծախիւք ի Քս. Լանգուցեալ Ազա Սարգսի Տէր Ցավիանիսինեանին եւ յասուկ օգնական լինողաց մերազնէից։ Ի Հայրապետութեան սրբոյ Էջմիածնի Տեսան Եփրեմի ամենայն հայոց կաքուղիկոսի։ Աշխատասիրութեամբն Զըմբրլում Աւետեանին։ Ցամի տեսան 1813 ի Կաղկարայ, ի տպարանի Աւետ Զըմբրլումեանի։»

Էջ՝ 240, չհաշուած 12, շարուածք՝ $11 \cdot 6 \times 6$ սմ.։
(Ա. Վ. Գ., Համար 2137)։

4. «Գիրք որ կոչի յանախապատաւմ։ Ասացեալ Սուրբ եօրն մերայ Երանելոյն Գրիգորի Լուսաւորչին։ Յորում պարաւակի նառ։»

Առաջին տպագրումն զրյաց եղեալ է ի Կոստոնթինուալուս Ժաղաքի ի քուին Հայոց 1186. Խսկ այժմ վերստին տպագրեցաւ արդեամբ եւ ծախիւք ի

Քրիստոս հանգուցեալ Աղայ Սարգիս Տէր Յովհաննէսեամիթ, եւ յառուկ օգնական լինողաց մերազնէից:

Աշխատասիրութեամբ Զընթլում Աւելուեանին :... Յամի տեառն 1813 : Ի Կալկաբայ : Ի տպարանի Աւետ Զընթլումեանի» :

Էջ՝ 325, չհաշուած 10, շարուածք՝ $15 \cdot 5 \times 9 \cdot 3$ սմ. :

(Ա. Գ. Մ. անձնական գրադարան) :

5. «Տետրակ գրվասանաց առ համօրէն տնօրիմական առլր ուխտաւուդիսն, որք են յԱ(սուաւ) ծահրաց քաղաքն ս(ուր)ք Երևաղէմ(4); Որ սրբագրելով վերատի տպագրեցաւ յամի տ(եառ)ն 1813 եւ մերոյ ԹՄԿԲ : Ի Կոստանդնուպոլիս : Ի տպարանի Մարտէս Դպրի» :

Էջ՝ 64, շարուածք՝ $13 \cdot 7 \times 8 \cdot 1$ սմ. :

(Ա. Վ. Գ., Համար 2834) :

1814

6. «Գիրք քաղաքավարութեան: Ցորում աւանդին կանոնք մարդկային կենացութեան: Ցաւելեալ ի վերջոյ եւ համառօտ քովանդակութիւն գրացրս աշխարհաբառ լեզուա, ի պէտս մանկանց: Արաբեալ ի հայր Խցիստիս մարդապետէ Փափագեան, յաշակերտութեան Տեառն Մխիթարայ մեծի Արքայի: Եւ տպագրեալ ի Վէնէտիք Ցամի Տեառն 1806, հրամանաւ գերապատիւ տեառն Ստովանեսսի արին եպիսկոպոսի եւ Արքայի: Խոկ այժմ վերստին տըպագրութեամբ ի լոյս ածաւ արդեամբ եւ ծախիւք Ֆաղգրամիտ պատանեկին աղայ Մարտիրոս Սարգսեանին: Ի հայրապետութեան Տեառն նիդրեմի ամենայն Հայոց Կաքուղիկասի:

Ցամի տեառն 1814: Եւ Ազարիայի 199: Շամս 1: Ի Կալկաբայ : Ի տրպարանի Աւետ Զընթլումեանի» :

Էջ՝ 174, չհաշուած 17, շարուածք՝ $12 \cdot 5 \times 7 \cdot 8$ սմ. :

(Ա. Վ. Գ., Համար 3184) :

1819

7. «Արտուր որ է տախզ տրտմահազած յօրինեալ եւ ըստ մասին թարգմանեալ, աշխատասիրութեամբ բամասիրին պարբ 8. 8. Ազամուրեանց: Ի Կալկաբայ ի տպարանի Աւետ և Յովհաննէս Զընթլում Աւելուեան : 1819» :

Էջ՝ 84, չհաշուած 2, շարուածք՝ 11×7 սմ. (Երբեմն տարրեր) :

Անուանաթերթի վրայ կայ տոպարանի նշանը, որ ձուածեւ շրջանակի մէջ մի բաց գէրք է, վրան կարէին, փետուր եւ քանոն, վերեւում խաչ, խոկ անկիւններում գրուած Խ. Ա. Ա. Բ.: Շրջանակի երկու կողմերում նկարուած է առիւծ (քաջութիւն) եւ կին (արդարութիւն), ձեռքին կշիռ եւ սուր. շըրճագծից ներքեւ մի ժապաւէն, որի եւ ձուածեւ շրջագծի վրայ է գրուած.

«Յովհաննէս Ցարութիւն Ազամուրեան Արդարի իբրեւ զարիւծ յանձնապատճան է» :

Խաչի անկիւններում եղած չորս տառերը նշանակում են՝ «Այսէեմութիւն», «Արդարութիւն», «Արիութիւն» եւ «Բարեխառնութիւն» (տեսնել էջ 83-ը) :

(4) Ունի աշխարհաբար եւ հայտառ բբնիկն երգեր:

Գրքի բոլոնդակութիւնը բանաստեղծութիւններ են, որի էջ 18-73-ը կրն նաև անգլերէն Բարդմանութիւնները :
(Ա. Գ. Մ. անձնական գրադարան) :

1 8 2 0

8. «Մեկնաւթիւն երգ երգոց անուանեալ բանիցն Սազմօնի հաւաք-
ե(ա)լ եւ մեկնե(ա)լ ի Ցակորայ վարդապետէ Կարմնցոյ Սիմոն(ա)ն . . .
1820 ի տպարանի երկոցունց եղարց հարազատաց Աւետի եւ Ցովհաննիսի
Ջընթըում Աւետնեց ի Կալկարայ» :

էջ՝ 377, չհաշուած 9, շարուածք՝ $16 \cdot 8 \times 10 \cdot 5$ սմ. :
(Ա. Վ. Գ., Համար 453) :

1 8 2 6

9. «Համառօտ ժերականութիւն Հայկագեան լեզուի . . .

Յօրինեալ ըստ նախնի ուղղափօսութեան, ի հայր Միքայէլ վարդա-
պետէ Զահէնանց Կոստանդինուպօլիսեցոյ : Եւ վերստին տպագրեալ ի Մար-
դրսիբական Տպարանի : Ի Կալկարայ ; . . . Ցամի տեան 1826» :

էջ՝ 164+29=193, շարուածք՝ $16 \times 9 \cdot 3$ սմ. :

Կազմուած է 1823 թուին տպագրուած ժերականութեան հետ միասին :
(Ա. Վ. Գ., Համար 3020) :

1 8 3 3

10. «Անց ժողովոյ տասանց ի սկզբանորութեան հաստատութեան
նոցին, ի Կալկարա, ի 10 Ցաւիսի 1833: Ի Տպարանի Մարդասիրական Ճե-
մարտին» :

էջ՝ 51, չհաշուած 2, շարուածք՝ $18 \cdot 5 \times 9 \cdot 7$ սմ. :

(Ա. Վ. Գ., Համար 3583) :

1 8 3 5

11. «Առանձնական աղօրք : Կրառ յաղաց բարտք առնելոյ զԱռանձ-
նական աղօրքն 1835 թ.» :

էջ՝ 84, շարուածք՝ $15 \times 7 \cdot 2$ սմ. :

Գրքոյնէլ վերջոց թերի է, շունի նաև ախողոսաթերթ, բայց ինչպէս
քննութիւնը ցոյց տուեց, պէտք է լինի Սկրտող Միսիոնարաց տպարանում
տպագրուած դրքերի համար 10-ը : Սոյն գրքոյնէները սկսեալ 8-րդ(?) հա-
մարից մինչեւ 12-րդը, ունեն նաև միացեալ էջեր, հետեւաբար սոյն գրքոյն
պէտք է ունենայ 84 էջ, որովհետեւ սկսում է միացեալ էջ 129-ով, իսկ յս-
շորդ՝ 11-րդ գրքոյնէջ էջ 213-ով :

Գրքոյնի առաջին էջի վերջում գրուած է 1835 թիւը և տպաքանակը՝
1000 օրինակ : Սոյնորաքար Մկրտող Միսիոնարաց տպարանի գրքերն ունեն
տպաքանակներ՝ 1000-2000 օրինակներով :

(Ա. Վ. Գ., Համար 4128) :

1 8 3 8

12. «Ժամագիրք(?)» : էջմիածին, 1838 թ. :

Մկրտը թերի, սկսում է էջ 355-ից, էջ 488-ում «Խորիուրդ Խորին»

շարականն է, իսկ էջ 530-ում՝ «Խըրատ տումարական աղիւսակին»։ Էջ 540-նու-ը կաթողիկոսների անուանացանկն է, իսկ էջ 545-546՝ գրքի յիշատականներ։

Էջ՝ 546, չարուածք՝ $12 \cdot 3 \times 8 \cdot 5$ սմ.։

Տիտղոսաթերթ չունի, վերջի յիշատակարանից երեւում է որ արզուած պէտք է լինի Էջմիածնում 1838 թուին։

(Ա. Վ. Գ., Համար 4709)։

1 8 3 9

13. «Սիրտ մարդոյ որ է տանար Աստուծայ կոմ գարծարան սատանայի. տասն պատիկերներով առաջի դրամ, որ ամէն մարդ հեշտ խմանայ եւ միտք առնենով Քրիստոնէական կեանքիմ ենուեւելոյ համար ջանք ամէ։ Թարգմանութիւն ի Շուշի յամբ տեսան 1833։ Վասն Ամիրիկան հաւատոյ տետրականների ժողովին տափական ի տպարանի Մկրտիչ Միսիոնարաց ի Կալկարա- Յուլիս 1839։»

Տպարանը, վայրին ու թուականը տպուած է վերջում եւ կրում է 11 թիւը։

Էջ՝ 36, չարուածք՝ $14 \cdot 8 \times 8 \cdot 5$ սմ.։

(Ա. Վ. Գ., Համար(5), Լ. Գ. Մ. անձնական գրադարան)։

14. «Տասն եւ վեց կարճառու քարզգներ։ Թարգմանութիւն ի Շուշի յամբ տեսան 1833(6). Վասն Ամիրիկան հաւատոյ տետրականների ժողովին տափական ի տպարանի Մկրտիչ Միսիոնարաց ի Կալկարա- Յուլիս 1839։»

Սա տպարանի համար 12 գրքույն է, եւ ոռովորարար միւսների նմանունի նաեւ անդուերէն խորագիր։

Էջ՝ 56, չարուածք՝ $14 \cdot 8 \times 8 \cdot 2$ սմ.։

(Լ. Գ. Մ. անձնական գրադարան)։

1 8 4 0

15. «Կայսերական կարգադրութիւն, ի պէտու սրբոյն էջմիածնի։ Ի Մարդասիրական ձեմարանին։ Ի Կալկարա- և սկզբան Յունվարի։ 1840։»

Էջ՝ 40, չհաշուած 6, չարուածք՝ $16 \cdot 5 \times 10 \cdot 3$ սմ.։

(Ա. Վ. Գ., Համար 3547)։

1 8 4 1

16. «Պատմութիւն սուրբ գրոց։ Արարեալ համառու հարցմանք եւ սլատախանեօք, յաղագս դեռահասակ մանկանց քարգմանեալ ի ոռւսաց լեզուէ։ Առաջին անգամ տպեալ յամի, 1828, երկրորդ անգամ տպեալ Ցամբ Տեսան 1832, ի Շուշի։ Նոյն վերատիմ տպեալ ի տպարանի Մկրտող Միսիոնարաց վասն Ամիրիկան։ հաւատոյ տետրականների ժողովին ի Կալկարա- Յուլիս 1841» (թիւ 16)։

Էջ՝ 24, չարուածք՝ 15×8 սմ.։

(Լ. Գ. Մ. անձնական գրադարան)։

(5) Վամին գրադարանում կամ այս եւ այլ մի քամի գրքերից, որոնց համարները չենք յիշատակել։

(6) «Հայ Գիրքը 1801-1850 թուականներին» գրքում՝ էջ 191, համար 761, գրուած է 1832 թիւ։

17. «Կարեառու Ազօքէմներ: Շաբաթի ամիեն մէկ օրին համար քարգմանութիւն. տաղջին անգամ տպեալ Յամի տեսան 1832 ի Շուշի. ճայնն տպեալ ի տպարանի Մկրտող Միսիոնարաց ի Կալկարայ վասն Ամիրիկու՝ հաւատոյ տեսրակների ժողովքին 1841» (թիւ 17):

Էլ' 36, շարուածք՝ 15.5×8.3 սմ.։
(Ա. Վ. Գ., Համար 3115):

18. «ՄԵԴԻ մեծամալոյն եւ զօրամալոյն համար: Թարգմանութիւն առաջին անգամ տպեալ յամի տեսան 1833 ի Շուշի: Նայն տպեալ ի տպարանի Մկրտող Միսիոնարաց ի Կալկարայ վասն Ամիրիկու՝ հաւատոյ տեսրակների ժողովքին 1841» (թիւ 18):

Էլ' 28, շարուածք՝ 14.8×8.4 սմ.։
(Ա. Գ. Մ. անձնական գրադարան):

19. «ԼԱ տեսրակ: Ի մայ պարուածակին կարեառու ֆերականական գուարենաթիւնեք: Ակիրքն քաւարանութեան: Անիսի ազգաց: Զանազան երկրեաց գրամի արժէնն Կալկարու սեայ ոռուիս համարիւն: Զանազան չափուց նու կըսց անուաննեն եւ այլն եւ այլն: Տպեալ ի տպարանի Մկրտող Միսիոնարաց ի Կալկարայ 1841» (թիւ 20(?)): :

Էլ' 36, շարուածք՝ 14.7×8.4 սմ.։
(Ա. Գ. Մ. անձնական գրադարան):

1844

20. «Քարեկամօրէն Յորդորմանեք: Վասն Կիրակի օրերն սուրբ պահելոյ: Ի տպարանի Մկրտող Միսիոնարաց ի Կալկարայ 1844» (թիւ 21):

Էլ' 30, շարուածք՝ 15.5×8.3 սմ.։

Անուանաթերթը պակասում է. ասպարանը, վայրին ու թուականներ վերցրել ենք էջ 30-ից:
(Ա. Վ. Գ., Համար 3121):

1846

21. «Օրացոյց ամի տեսան 1846:
Շնորհեալոր նոր տարի,
թէ սէր ութիս ընկերի:
Գիր տարւոյ է 2: Վերադիրն ժամանակ հոքներեակն Հռոմայեցուց՝ թ:
Տանուտէր տարւոյն է կոյսն: Ի տպարանի Արարատեան Ընկերութեան ի Կալկարա:

Էլ' 26, շարուածք՝ 7.2×5.5 սմ.։

Վերջին շապիկի վրայ գրուած է՝

«Տպագրեցամ՝ Ազգաւոր-վեցամսան 12, Այրբենարան 2 ձառ. ազգ. Յուուազադիմ. 1-8, Օրացոյց 1:

Տպագրին՝ Ազգասէր, Ազօքամատոյց նոխ, Առակի պարսից, Պատմութիւն սուրբ գրոց, Վարդգէս:

(Ա. Վ. Գ., Համար 579):

22. «Թառաչ սրտի: Հաւաքեալ ի եռգեւոր մասենից ի պէտս շերմենամն աղօքկերաց: Աշխատասիրութեամբ Պօղոսի Վիշէնեան Կոստանդնու-

պօլսեցոյ ի Հայրապետութեան տեառն Տեառն Ներսիսի եւ Յառաջնորդութեան Տեառն Յովհաննու Սուրբմեան: Ի Կալկաքա յլլըծիւ տպարանի Պօղոսի Վիշէնեան: 1846»:

Էջ՝ 153, չհաշուած 12, շարուածք՝ $7 \times 4 \cdot 2$ սմ. :
(Ա. Վ. Գ., Համար 3325):

1848

23. «Ժամագիրք Ատենի: Արարեալ սուրբ և Աստուածանորի քարզ-մանչացն մերոց Մահակայ եւ Մեսրովայ և երանելի հայրատեսացն Գիւտայ եւ Յովհաննու Մանդակումնոյ եւ պրոյն Ներսիսի Շնորհալույն...: Ի Կալկաքա Արծիւ տպարանի Պօղոսի Վիշէնեան Կաստանդնուպօլսեցոյ յերկրորդում ամի՞ տպարանի 1848»:

Էջ՝ 172, չհաշուած 4, շարուածք՝ $21 \times 15 \cdot 5$ սմ. :

Վերջում տասնմին չչակալութեամբ ունի հետեւեալ ժամաները՝

«Խօրատք յազագու պաշտամանց սուրբ Եկեղեցեացն Հայաստաննայց. Արարեալ ի սուրբ վարչապետին Թովմայէ Մեծաքեցւոյ ի պայծառութիւն կարգաց սուրբ Եկեղեցեացն Հայոց» (Էջ 1-8), «Կարգաւորութիւն սուրբ Եկեղեցեացն Հայոց եւ արարագութիւնն ժամանեցաց. Արարեալ Տեառն Ներսիսի Հայոց Կարուղիկոսի: Որ եռ բերձի ի սուրբ...» (Եւ այլ լրատաներ, Էջ 1-5), «Խօրատ տօմարական եւ մշտնշենաւոր աղիւսակաց» (Էջ 1-3) եւ յերշում մէկ էջ վրիպուկ:

Սրան կից կազմուած է 1817 թուին Սիրամփուրում տպագրուած Աստուածաշառնչի մի մասը՝ սկզբից մինչեւ 182 էջը:

(Ա. Վ. Գ., Համար 121, 122 եւ 2596, նաև «Ցուցակ»ի Համար 1541 գրքի ծանօթութիւնը, Էջ 367):

24. «Պատարագ կամ ժամերգութիւնն ի մատուցանելն զուրք խորհուրդ մարմնոյ եւ արեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Ի Կալկաքա ՅԱրծիւ տպարանի Պօղոսի Վիշէնեան Կաստանդնուպօլսեցոյ. յերկրորդում ամի՞ տպարանի 1848»:

Երրորդ էջում գրուած է. «Առ վսնմափայլ եւ հայրենաւէր Ազայ Յովհաննան Եկեղեցեանց Ասպետ ի Կալկաքա Բուլէր յարգանաց ի տպագրողէ մատենիս:

Էջ՝ 155, ծաւալ շարուածքք՝ $13 \times 7 \cdot 5$ սմ. :
(Ա. Վ. Գ., Համար 1768):

Գ

ՑԱՆԿ «ՄԿՐՏՈՂ ՄԻՍԻՈՆԱՐԱՅ» ՏՊԱՐԱՆԻ ԳՐԲԵՐԻ

Համաձայն ձեռք բերուած գրքերի ու նրանց ունեցած հերթական Համարների, սկսեալ 1831 թուից մինչեւ 1844 թիւը, Կալկաթայի «Մկրտող Միսիոնարաց» տպարանում տպագրուել են 22 գիրք: Այս գրքույիններից մինչեւ այժմ, մեզ յաջողուել է ձեռք բերել կէսը, իսկ միւս մասը դերեւս մնում է անյայտ:

Վերյիշուած 22 գրքոյներից «Հայ Տպագիր Գիրք»ի ցուցակում յիշուած է 12 անուն, որոնցից ձեռքի տակ ունեցել են միայն երկուսը՝ թիւ 1000 և 1314 (երկուսն էլ նոր Կոտակարան): Միւս 9 նոր գտնուած գրքոյներից միայն մէկն է որ յիշուած է ցուցակում՝ համար 1113, իսկ միւսներն եղել են անյայտ:

«Միկրոտ Միտիոնարաց» տպարանի հրատարակած գրքերը, սովորաբար Շուշիում հրատարակուող՝ «Բողոքական Քարոզիչ»ների գրքերի տարրեր ժամանակներում եւ ոչ հերթականութեամբ եղած վերահրատարակութիւններն են: Քանի որ այս գրքոյներից ոմանք համարակալուած են, իսկ ոմանք ոչ, դրա համար էլ գտնուար է լինում ճշգել տպագրութեան հերթականութիւնը: Ուստի եղած այդ շփոթութիւնները մատամբ պարզելու համար, ստորեւ առաջ ենք բերում զբանց լրիւ ցանկը:

Աստղանիշերը նշուած են «Ձպագիր Գիրք»ի ցուցակում, որոնցից միան երկուսը՝ համար 13 և 22-ը լրիւ: Հարցական նշան ունեցողների համարները տոյոդ չեն: Նոյնը նաև տպագրութեան թուականները: Ստոյդ չեն նաև համար 5-ի անունը եւ թուականը, ինչպէս եւ համար 6-ի թուականը: Վերյիշեանները չենք ունեցել ձեռքի տակ, որոնք կարսու են սորտագրումի:

*1(?). «Համաօսու բացարութիւն» («Յուցակի համար 711»), 1831:

*2(?). «Մտածութիւն ի վերայ Աստուածաշունչի» («Յուցակի համար 712»), 1831:

*3(?). «Բովանդակութիւն բալորի սրբազնի գրուածոց» («Յուցակի համար 745»), 1832:

*4(?). «Նոր Խորայէլի մը հաւատոքը» («Յուցակի համար 750»), 1832:

5(?). «Ծիրառ» (?) (ըստ մի գրասան ցուցակի), 1835(?) :

*6. «Թուղթ Պօղոսի առաքելոյն առ Կողոսացիս», («Յուցակի համար 710»), 1831(?) :

*7. «Աստուածաշունչի բովանդակութիւնը» («Յուցակի համար 744»), 1832:

*8. «Թուղթ առ Հոռմայեցիս» («Յուցակի համար 746»), 1832:

*9. «Մտածութիւն ի վերայ վարդապետութեան հաշտութեան» («Յուցակի համար 748»), 1832:

10. «Առանձնական աղօք» , 1835

11. «Սիրա մարդոյ որ է տանար Աստուծոյ», 1839:

12. «Տասն եւ վեց կարճառու քարոզներ», 1839:

*13(?). «Նոր Կոտակարան» («Յուցակի համար 1000»), 1839:

14. «Առաջին քրիստոնէական վարդապետութիւն», 1841:

*15(?). «Հարցի ի վերայ բննութեան անձին» («Յուցակի համար 1112»), 1841:

16. «Պատմութիւն սուրբ գորց», 1841:

17. «Կարճառու աղօքներ», 1841:

18. «Մեղքի մեծանալոյն եւ զօրանալոյն համար», 1841:

*19. «Մեղքի խալ ամելոյ քան չե», («Յուցակի համար 1117»), 1841:

20(?). «Լաւ տեսրակ», 1841:

21. «Բարեկամօրէն յորդարմունք», 1844:

*22(?). «Նոր Կոտակարան», («Յուցակի համար 1314»), 1844:

ՄԻ ԳԱՆԻ ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ
(ըստ անձնական մի գրադարանի գրացուցակի)

Ա

«ՀԱՅ ԳԻՐՔ»Ի ՑՈՒՑԱԿՈՒՄ ԶԵՇՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1. «Գիրք առաջինից մինչև 12-րդ» (Համար 1155-57), Մագրաս 1812:
 2. «Տեսրակ տեսութիւն Աստուածային» (Համար 1169), Կալկաթա,
- 1814:
3. «Տեսրակ ի վերայ հաստառութեան ի հետց եւ նորոց» (Համար 1210), Կալկաթա, 1830:
 4. «Էրաստ», Կալկաթա, տպ. Մկրտ. Միսիոն. (տե՛ս Համար 5-ը),
- 1835:
5. «Հրաժարական երգ», Բայրոնի (Համար 1274), Կալկաթա, 1846:
 6. «Ցուցակ Կալկ Մարդ. Ճեմարանի», 1826:

Բ

«ՀԱՅ ԳԻՐՔ»Ի ՑՈՒՑԱԿՈՒՄ ՑԵՇՈՒԱԾ
ԲԱՑՑ ԶԵՄԱՍԾ ԳՐՔԵՐ

1. «ԶԼԵ ընդդեմ փորձութեան» (Ցուցակ», Համար 609, Գր. 1181), Կալկաթա, 1822:
 2. «Օրացոյց», Կալկաթա («Ցուցակ», Համար 685, Գր. 1406),
- 1830:
3. «Օրացոյց», Կալկաթա («Ցուցակ», Համար 714, Գր. 1407),
- 1831:
4. «Լէյլի», («Ցուցակ», Համար 747), 1832:
 5. «Կարք եւ կանոն վս. Ամենափրկ. Ե. Զ.» («Ցուցակ», Համար 1602, Գր. 1326), 1849:

Հ. Գ. ՄԻՆԱՍՅԵԱՆ

Նոր-Գուղա
3 Մեկտ. 1969 թ.